

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿՈՒՐ ՊԱՐՈՆՅԱՆԻ՝ ԴԵՐԱՆՈՒՆ-ԾԱԾԿԱՆՈՒՆՆԵՐՈՎ ՏՊԱԳՐՎԱԾ ԵՐԿԵՐԸ Կ. ՊՈԼՍԻ «ՄԵՂՈՒ» ԵՐԳԻԾԱԹԵՐԹՈՒՄ

ՄԱՐՈ ՂՈՒԿԱՍՅԱՆ

*– Ի՞նչ տարբերություն կայ մեղուի մ՛ու Մեղուին մեջ տեղ:
– Մա՛թե, առաջինն իր խայթուածովը կը մեռնի,
իսկ երկրորդն անո՛վ կ՛ապրի՛:*

Հակոբ Պարոնյանի գրական ժառանգությունը նրա մահվանից շուրջ 130 տարի անց էլ մտածելու, քննարկելու, բանավիճելու առիթներ է ընձեռում, մեծածավալ հետազոտությունների հիմք դառնում: Ընդամիս մեծ երգիծաբանի կյանքի և ստեղծագործության բազմաթիվ էջեր դեռ կարոտ են պատշաճ ուշադրության, ինչը պարտավորեցնում է այսօր հետադարձ հայացքով նորովի արժևորել և ներկայացնել հանճարեղ երգիծաբանին, գրողին ու հրապարակախոսին: Ռոպեր Հատտեճյանը գրում է. «Այսօր Պարոնեանը կը փնտռենք ամեն բանէ առաջ անոր համար որ մեր գրականութեան ու հրապարակագրութեան մեջ միշտ երգիծաբանն է որ եղած է ամենէն մեծ բացական: Այլ խօսքով՝ երգիծաբան շատ քիչ ունեցած ենք»²: Երգիծանքը հասու չէ ամեն գրողի. այն պահանջում է զավեշտի բարձր զգացողություն, կյանքի ողբերգականության հաղթահարման մեծ տենչ և գրողական հնարքների հմտություն: Այս ամենով օժտված էր Պարոնյանը, և ճիշտ է բնորոշել Հակոբ Օշականը. «Պարոնեան ծաղրին չէ իսկ մտածած»³: Ինքնաբուխ, բնատուր է երգիծելու նրա տաղանդը:

Սույն հոդվածով նպատակ ունենք անդրադառնալու ոչ թե գրողի լայնորեն քննարկված գրական ժառանգությանը, այլ այն ստեղծագործություններին, որոնք ինչ-որ առումով դուրս են մնացել հետազոտողների տեսադաշտից: Խոսքը մասնավորապես Կ. Պոլսի «Մեղու» երգիծաթերթում դերանուն-ծածկանուններով՝ **Ես, Դուն, Անիկայ, Մենք, Ոմն, Ո՛վ է Նէ**, պարբերաբար հրատարակված գործերի մասին է: Նախ-

¹ «Մեղու», Կ. Պոլիս, 1873, թիվ 164, օգոստոսի 18 (հրատարակվել է «Ով է Նէ» ծածկանունով):

² Ռ. Հատտեճեան, Յակոբ Պարոնեան վերադարձաւ, Իսթանպուլ, տպ. Մուրաս օֆսեթ, 1999, էջ 8:

³ Յ. Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 4 («Դեպի իրապաշտներ»), Երուսաղեմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 1956, էջ 80:

քան այդ գործերը քննելը կարճ անդրադարձ կատարենք այդ երկերի՝ Պարոնյանի գրչին պատկանելու հարցին, քանի որ դա խնդրահարույց է եղել:

Որոշ բանասերներ հերքում են դրանց՝ Պարոնյանի գրչին պատկանելը, մյուսներն էլ փաստերով հաստատում են պարոնյանական շունչն ու գիրն այդ ստեղծագործություններում: Առաջինի կողմնակիցներից է նշանավոր պարոնյանագետ Գառնիկ Ստեփանյանը, որը կարծում է, որ դրանք երգիծաթերթի աշխատակիցներից մեկն է հեղինակել: Անդրադառնալով մասնավորապես «Թատրոն» երգիծաթերթին՝ նա գրում է. ««Թատրոնում» հանդիպում ենք նաև այլ աշխատակիցների: Երգիծաբանը տեղ է տվել գրապայքարի շուրջ ծավալված մի բանավեճի, որին մասնակցել են Ռ. Պերպերյանը, Մինաս Չերազը և Հակոբ Գուրգենը, սակայն դա ամենևին չի անդրադարձել թերթի ղեմկրատական ուղղության վրա, որի հիմնական արտահայտությունը խմբագրից հետո՝ Ես, Դու ծածկանունով հանդես եկող մի հրապարակախոս է: Այս ստորագրություններով տպագրվել են Կ. Պոլսի մի շարք թաղամասերի երգիծական նկարագրությունները, «Հին աշխարհին Խաչիկը և նոր աշխարհին Գաբիկը» ծավալուն վիպակը և տասնյակ այլ երկեր:

Սրամիտ է Ես-ը, խորհող, տրամաբանող, իսկ ոճը տեղ-տեղ ծանր, տեղ-տեղ այնքան պարոնյանական, որ սովետահայ որոշ բանասերներ այդ ծածկանունները վերագրել են մեծ երգիծաբանին, որ անշուշտ պարզ թյուրիմացություն է»⁴: Գառնիկ Ստեփանյանի կարծիքով, այս ստեղծագործությունների վրա նկատելի է միայն Պարոնյանի խմբագրական միջամտությունը, ուրիշ ոչինչ: Բայց հետաքրքրական է, որ Հակոբ Պարոնյանի՝ տասը հատորով հրատարակված երկերի ժողովածուի ութերորդ և իններորդ հատորներում, որոնց գլխավոր խմբագիրն է Գառնիկ Ստեփանյանը, ներառված են «Ո՛վ վ է Նէ» և «Կարկուտ» ծածկանուններով մի քանի գործեր⁵: Պարոնյանագետն այս հարցում հակասությունների մեջ է ընկել թերևս կամ էլ հետևողական չի եղել հատորյակը կազմելու աշխատանքներին: Տասնհատորյակի կազմողը Ալիս Մանուկյանն է, որի կարծիքով՝ «Ես», «Դուն», «Անիկա» դերանուն-ծածկանունները պատկանում են Պարոնյանին. նա նաև նշում է, որ «Ո՛վ վ է Նէ» ծածկանունով գործերը միշտ վերագրվել են Պարոնյանին⁶, սակայն, փաստորեն, տասնհատորյակի մեջ ընդգրկել են այդ ծածկա-

⁴ Գ. Ստեփանյան, Հակոբ Պարոնյան. կյանքը և հրապարակախոսությունը, Եր., Հայպետհրատ, 1964, էջ 71-72:

⁵ Տե՛ս Ն. Պարոնյան, Երկերի ժողովածու տասը հատորով, գլխավոր խմբագիր՝ Գ. Ստեփանյան (հ. 8 (1972 թ.)՝ Լրագրական կերակուր (էջ 310-311), Աշխարհիս վերջը ե՛րբ պիտի գա (էջ 315-316), Լրագիր կարդացողները (էջ 318-319) «Ո՛վ վ է Նէ» ստորագրությամբ, հ. 9 (1975 թ.)՝ Միրուն թատրոն (էջ 243) «Ո՛վ վ է Նէ» ստորագրությամբ, Քանի մը բաներ, որ մարդուն լացը կը շարժեն (էջ 240-241)՝ «Կարկուտ» ստորագրությամբ, Եր., ՀՍՍՌ ԳՍԱ հրատ., 1962-1979:

⁶ Տե՛ս Ա. Մանուկյան, Հ. Պարոնյանի գրական ժառանգության շուրջը, «Տեղեկագիր Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի», Եր., 1953, թիվ 6, էջ 65:

նունով գրված մի քանի գործեր ընդամենը՝ դուրս թողնելով մի զգալի քանակ, այդ իսկ պատճառով հակիրճ անդրադարձ կկատարենք նաև հատորյակից դուրս մնացած գործերին:

Հարցին հստակ և ամբողջական պարզաբանում է տվել մերօրյա գրականագետներից Ալբերտ Մակարյանը՝ համոզիչ փաստերով հիմնավորելով և ընդհանրացնելով համախոհ մյուս գրականագետների՝ այդ գործերի՝ Պարոնյանին պատկանելու վերաբերյալ արտահայտված տեսակետները⁷: Պաշտպանում ենք Ալ. Մակարյանի՝ գիտական կարեվոր բացահայտումներով հիմնավորված դրույթը և հետագա շարադրանքի հիմքում կունենանք հենց այս տեսակետը՝ ընդունելով, որ դերանուն-ծածկանուններով տպագրված գործերը միանշանակ Պարոնյանի գրչին են պատկանում: Այժմ անդրադառնանք այդ գործերի քննությանը՝ մասնավորապես «Մեղու» երգիծաթերթում հրատարակված երկերին, որոնք սակավաթիվ չեն:

Կատարվել է ընդգրկուն աշխատանք՝ «Մեղու» երգիծաթերթի (Կ.Պոլիս) 1872 թվականի (ասել է թե՛ Պարոնյանի խմբագրության շրջանի) նոյեմբերի 4-ի 101-րդ համարից մինչև 1873 թվականի դեկտեմբերի 29-ի 198-րդ համարներում **Ես, Դուն, Անիկայ, Մենք, Ուն, Ո վ է Նէ** ծածկանուններով տպագրված նյութերի համակարգչային շարվածք⁸: Այդ ժամանակահատվածում **Ես** ծածկանունով տպագրվել է վեց ստեղծագործություն, **Դուն** ծածկանունով՝ քսան, **Անիկայ** երեք, **Մենք** մեկ, **Ո վ է Նէ** ութ, **Ուն** ծածկանունով՝ մեկ հոդված: Պետք է նշել նաև, որ այդ բնագրերը հրատարակության պատրաստելու համար զանազան բառերի թե՛ տեքստաբանական, թե՛ իմաստային ճշգրտումներ ենք կատարել, ինչպես և որոնողական տևական աշխատանքով այդ ստեղծագործություններում հայատառ թուրքերենով հատվածներն ենք ի մի բերել:

Պարոնյանի գննող, ամեն հարցում հետևողական գրողական տեսակը այս երկերում ևս ուղեկցում է ընթերցողին՝ նրան ներկայացնելով ժամանակի խոցավոր զանազան թեմաներ՝ արտաքին և ներքին քաղաքականություն, հոգևորականություն, սոցիալական կյանք՝ իրենց տարաբնույթ խնդիրներով ու զավեշտալի կողմերով: Ինչպես միշտ, ընդգրկուն է Պարոնյանի գրիչը՝ ժամանակի մոլախոտերն արմատախիլ անող, անխնա ամեն տեսակ անարդարության հանդեպ: Անդրադառնանք մի քանի ստեղծագործությունների՝ ի հաստատումն վերոգրյալի: Ուշագրավ է «Ես» ծածկանունով հրապարակված «Բարեկենդանն առաջ» դրամատիկական ժանրի ստեղծագործությունը: Վարդանի և Տիգրանի երկխոսության միջոցով Պարոնյանն իր քննադատության սլաքն ուղղում է «Ասիա» լրագրի կղերապահպանողականների դեմ: Հետևենք գրույցին.

⁷ Տե՛ս **Ա. Մակարյան**, Կրկին Պարոնյանի հետ, Եր., Անտարես, 2018, էջ 219-240:

⁸ Մոտ ապագայում պատրաստվում ենք առանձին գրքով լույս ընծայել «Մեղու» և «Թատրոն» երգիծաթերթերում այդ ծածկանուններով հրատարակված գործերը:

«Վար. Ասիա՞ն այ դադրեցաւ ըսիք:

Տիգ. Ասիաի անոն տուի. ոչ ան ինչո՞ւ դադրի. Սուրբ գիրք կայ, սուրբ թերթն է այն: Կը պատմեն թէ բոլոր հողուածները եկեղեցոյ մէջ կը գրուին, Աստուծոյ տուն տալովը:

Վար. Անոր համար ուրեմն գրաբար են:

Տիգ. Միայն գրաբար ը. չէ՞ս տեսներ, Սուրբ գրոց վստմութիւնն ունին»⁹:

Զրույցին միանում է Երամը, որ նոր է ընտրվել երեսփոխան և պատրաստվում է «ատենական կանոնաց վրայ» ելույթ ունենալ: Խոսքի կոմիզմի միջոցով Պարոնյանը բացահայտում է երեսփոխանների էությունը և նրանց մասին շրջապատող մարդկանց (տվյալ դեպքում՝ Տիգրանի, Վարդանի) պատկերացումները: Լսելով, որ Երամը պատրաստվում է «ատենական կանոնաց վրայ» ելույթ ունենալ՝ Տիգրանը «ցամաք նիւթ» է այն որակում, և խոսակցությունն ունենում է հետևյալ ընթացքը.

«Եր. Իրաւամբ ցամաք՝ ամուլ մտքի մը համար. այլ երբ մարդ լուրջ կերպով վերծանութիւն ըրած է պատմութեան, իմաստասիրութեան, գրականութեան...

Վար. Անտարակոյս այն ատեն...

Եր. Մանաւանդ երբ մարդ բեղմնաւոր մտքով մը օժտուած է, կմախին մարմին և հոգի կուտայ և մէկ ակնթարդի մէջ ընդհանուր աշխարհի երեսը կը փոխէ:

Տիգ. Ահա՛, այդ է երեսփոխանի մը պաշտօնը. ո՛րչափ աղէկ սահմանեցիք:

Վար. Ատա՞նկ կ'ստուգաբանուի ուրեմն երեսփոխան բառը. աշխարհիս երեսը փոխող: Ես կարծէի ցարդ թէ մինակ իր երեսը փոխող ըսել է, 'ի պահանջել հարկին»¹⁰:

Զրույցին միանում են նաև այլ գործող անձինք՝ Քահանա, Գողթան, Տղայ մը, որոնց միջոցով էլ Պարոնյանը ստեղծում է խոսքի կոմիզմի մի շարք դրվագներ՝ հեզնելով թէ՛ երեսփոխանների դատարկաբան լինելը, թէ՛ շրջապատող մարդկանց՝ նրանց ուղղված մեծարանքի խոսքերը, ինչպես նաև մարդկային տգիտությունն առհասարակ: «Բարեկենդանէն առաջ»-ը փոքրիկ պիես է, որտեղ գրեթէ բացակայում է հեղինակային խոսքը, որն է նշում չկա տեսարանների մասին, միայն մի քանի տեղ կարդում ենք փակագծերում գրված «Պատուհան վազելով», «Փողոցը կ'երգուի», «Ներս մտնելով» հեղինակային նշումները, ինչպես նաև մեկ ծանոթագրություն¹¹: Կերպարները բնութագրող պիեսների

⁹ «Մեղու», Կ. Պոլիս, 1873, թիվ 123, մարտի 21:

¹⁰ «Մեղու», Կ. Պոլիս, 1873, թիվ 124, մարտի 24:

¹¹ Տե՛ս «Մեղու», Կ. Պոլիս, 1873, թիվ 125, մարտի 28:

հատուկ հատվածները ևս բացակայում են. երբեմն գործող անձինք իրենք են դրանք ներկայացնում: Հետաքրքրական է կերպարներից մեկը՝ Գողթանը, որը ոչ այլ ոք է, քան հենց ինքը՝ Պարոնյանը, որի վկայությունն են մի շարք նպատակային ակնարկները՝ «ԳՈՂ. *Ասիան* կը կարդա՞ք. երբեմն անոր մէջ ալ կը գրեմ առանց ստորագրութեան, բայց ոճս կը մատնէ»¹²: Հայտնի է, որ Պարոնյանը թղթակցել է նաև «Ասիա» թերթին¹³: Թեպետ «Բարեկենդանէն առաջ»-ը ավարտուն դիպաշար չունի, այն ընկալելի է իր այդ անավարտության սահմաններում, քանզի շարունակական ու անվերջ են այն բոլոր հարցերը, որոնց անդրադառնում է հեղինակը շատ փոքր ծավալի մէջ՝ լրագրեր, երեսփոխաններ, գրականություն և այլն: Պարոնյանին հաջողվել է կառուցել պիէս՝ պիէսին ոչ հատուկ բոլոր գծերով, վոդևիլային տարրերով, օրինակ՝

«ՏՂԱՅ ՄԸ. (Պատուհան վազելով) Մայրիկ, դիմակ կանցնի:

(Փողոցը կ'երգուի):

Կ'ըսեն թե՛ երբ Պոնաբառոյ մեծ Գաղղիոյ բըղէշիս կոչուեցաւ:

Թերթերն ամենքն ալ խաբանեց:

– Չեն ըսեր *ազատ ըրաւ*:

Կ'ըսեն՝ Տիոժէն փիլիսոփան

Տակառին մէջ կը նստեր.

Ես կը նստիմ անոր բերան»¹⁴:

Դրամատիկական ժանրի կարճ ստեղծագործություն է նաև «Թաղի մը խորհրդարանը» («Դուն» ծածկանունով), որը սկսվում է «Վարագայրը կը բացուի» հեղինակային նշումով: Դրան հաջորդում են տեսարանի հեղինակային նկարագրությունը և աշխույժ երկխոսությունները: Նշումներ չկան գործող անձանց մասին, նրանց բացահայտում ենք երկխոսությունների մէջ: Այստեղ ծաղրվում են գրեթե բոլորը՝ թաղականը, հոգևորականը և նրանց շրջապատող մարդիկ: Այն ինչ-որ առումով հիշեցնում է «Մեծապատիվ մուրացկանները», որտեղ բոլորը փորձում են հաճոյանալ Աբիսողոմ աղային, իսկ այստեղ թաղականին:

Մարդկային տգիտության ծաղրն է «Նորօրինակ վարդապետութիւն մը» ակնարկը («Ումն» ծածկանունով): Զրուցում են հոգևորականը և եկեղեցու հետևորդը, որին եկեղեցու քարոզիչն ասել է, թե երկնքի արքայությանն արժանանալու «կարճ ու դիւրին միջոցն է՞ ըլլալն է», և հոգևորականը, օգտվելով դիմացինի անգիտությունից, որը խիստ շահեկան է իրեն և իր պես այլ հոգևորականների, ասում է. «Աստուած

¹² «Մեղու», Կ. Պոլիս, 1873, թիվ 127, ապրիլի 4:

¹³ Տե՛ս **Ա. Ա. Խառատյան**, Հակոբ Պարոնյանի աշխատակցությունը «Ասիա» թերթին // Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1989, № 12, էջ 49-56:

¹⁴ «Մեղու», Կ. Պոլիս, 1873, թիվ 126, մարտի 31:

այսպիսի քարոզիչներն օր ըստ օրէ առատացնէ մեր ազգին մեջ»¹⁵: Մարդկային տգիտությունը, հոգևորականների՝ հավատից և Աստուծոց լիովին հեռու լինելը ենթարկվում են պարոնյանական գրչի սուր հարվածներին: Նույնը տեսնում ենք նաև «Կարդացող տերպապան» («Դուն» ծածկանունով), «Աւագ հինգշաբթի օրուան բանայիրը» («Դուն» ծածկանունով), «Մինակ մարդկություն եւ զգացում ունեցողը կը խպնի ու կը կարմրի» («Դուն» ծածկանունով), «Աւագերեցութեան կոնի մը» («Անիկայ» ծածկանունով), «Բանկայթիի թօփալ Տէր Պապան» («Դուն» ծածկանունով), «Կրօնական ժողով և Ղազար վարդապետին խալբախը» («Դուն» ծածկանունով) գործերում:

1873 թվականի ապրիլի 14-ի թիվ 130 համարում «Դուն» ծածկանունով հրատարակված մի նամակ կա՝ գրված իբր հոգևորականի անունից և ուղղված թաղականապետին՝ եկեղեցում տարածված գարշահոտությունը վերացնելու համար «մի՛ քանի օխխա [կամ օխա – ծանրության թուրքական չափ՝ 1282 գրամ] անոյշ խունկ սպառմանէ և զպատառ պատառ եղեալ խըսիրն նորոգել տալու» խնդրանքով: Չավեշտի է հասնում գարշահոտության պատճառի հոգևորականի բացատրությունը. Սուրբ Ջատկի տոնի առթիվ կանայք, երկար ժամանակ մնալով եկեղեցում, ուտելով պահքի կերակուրներ, որոնք ծարավեցնում են, շատ են քրտնում, ուստի սաստիկ գարշահոտություն է տարածվում:

Շատ են նաև այն գործերը, որոնցում Պարոնյանը ծաղրում է մարդկային սնահավատությունը, միամտությունը, կենցաղին կառչած լինելը: Ժողովրդի պատկերացումների մեջ այն օրերին տարածված է եղել «մեռելկոխ» հասկացությունը: Ըստ ժողովրդական պատկերացումների՝ մեռելկոխը մահացածից վախենալուց կամ էլ նրան հուղարկավորելիս ոտքի չկանգնելուց է լինում: Եվ ահա «Մեռելկոխի մը» գործում («Դուն» ծածկանունով) Պարոնյանն անդրադառնում է այս արատավոր ընկալմանը: Երեխան հիվանդ է, և շրջապատում ասում են, որ մեռելկոխ է՝ խորհուրդ տալով՝ «գերեզմանատունէն թազէ մեռածի մը վրայէն ավուճ [բուռ, ափ] մը հող բերել տաս տէ ետքը չօճուխին պօյն՝ ի վար, պօյն՝ ի վեր ցանես»¹⁶: Ահա այսպես սին պատկերացումները, անգրագիտությունը մարդուն հասցնում են ծայրահեղ ծանր դրության:

«Ահարկու երագ մը» («Դուն» ծածկանունով) պատմվածքում հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես է մարդկային սնահավատությունը հերոսի կործանման պատճառ դառնում. Պ-ի (Պարոնյանը անվան սկզբնատառն է նշում միայն) տեսած երագը խախտում է նրա կյանքի բնականոն ռիթմը՝ պատճառ դառնալով հոգեկան անհավասարակշռության: Այս միջադեպը ավելի շատ ողբերգական է, քան զավեշտալի. ինչ-որ առումով ընդգծված է փոքր մարդու դրաման:

¹⁵ «Մեղու», Կ. Պոլիս, 1873, թիվ 130, ապրիլի 14:

¹⁶ «Մեղու», Կ. Պոլիս, 1873, թիվ 140, մայիսի 23:

«Կամ հիսուն ոսկի կամ կես տուն» («Ես» ծածկանունով), «Հարսնախօսութիւն» («Անիկայ» ծածկանունով) երգիծապատումներում Պարոնյանը հասարակության ևս մեկ խոցելի կողմի՝ առուծախի վերածված ամուսնության վրա է շեշտը դնում: Առաջինում ներկայացվում է, թե ինչպես է տղան աղջկա պատվի հետ խաղում՝ այդ ամենից հետո նրա հետ ամուսնանալու դիմաց պահանջելով հիսուն ոսկի կամ կես տուն: Աղջկա ծնողները ոչ հիսուն ոսկի կարող են տալ, ոչ էլ կես տուն, դրա համար էլ աղջիկը «փեսին գալուստին կսպասէ, ինչպէս Հրէայք Մեսիային»¹⁷: «Հարսնախօսութիւն» երգիծապատումը ներքին խորը դրամատիկ շերտերով կրկին ցույց է տալիս ամուսնության վերաբերյալ հասարակության հետամնաց պատկերացումները: Լուսաբեր տուտուն եկել է միջնորդություն անելու ասկյարի գլխարկ ներկող մի տղայի համար, որը ոչ տուն ունի, ոչ ունեցվածք, աղջկանից էլ բավականին մեծ է և պիտի տնփեսա դառնա: Աղջկա մայրը սկսում է թվարկել դուստրերի արժանիքները՝ «երկուքն ալ աղուր դաստիարակութիւն առած ընտիր Հայերէն գիտեն, Գաղղիարէն գիտեն կգրեն ալ, ասկէ գատ բիանօ կը զարնեն, ամեն տեսակ կար ձեռքերնուն կուգայ, ասով ալ մեկտեղ պզտիկը տամ ու ետին ալ երեք տարի պէպէմիշ ընեմ [կերակրել], ճանրմ Լուսաբեր տուտու, ինսաֆ ըրէ [կարեկցել]»¹⁸: Տղան փաստորեն նաև օժիտ է ուզում, և այդուհանդերձ մայրը պատրաստ է, թեկուզ պարտքով գումար հայթայթել և աղջկան ամուսնացնել: Պատմությունը եզրափակվում է հեղինակի հեզնական ու տխուր խոսքով՝ «Աղջկան մը լաւագոյն օժիտը բարի դաստիարակութիւնն է տէյի գիտէինք մենք. եկո՛ւ տես որ Լուսաբեր տուտուն հակառակը կը պնդէ»¹⁹:

Պարոնյանը տարբեր երգիծապատումներով անդրադառնում է նաև Պոլսի քաղքենի հասարակությանը, նրանց օտարամոլությանը: Մրանք կարծես նախապատրաստումը լինեն առավել ընդգրկուն և շարադրանքով ավելի հղկված այնպիսի գործերի, ինչպես «Լեռը մարգարէին քով չերթա նէ՛ մարգարէն լեռան քով կ'երթա» ծավալուն երգիծապատումը, «Քաղաքավարության վնասները»: «Շաբիսա կուզեմ չէ՛ նէ հիմայ կը պօռամ» («Դուն» ծածկանունով) երգիծապատումը ներկայացնում է քաղքենի մի աղջկա, որին չի հետաքրքրում ծնողների նյութական վիճակը. նա շաբիսա [գլխարկ] է ուզում, ֆիստան [շրջագգեստ] և աստիճանաբար ավելացնում ցանկությունների շարքը.

« – Տուտու, անանկ է նէ բօթին մընալ կուզեմ, մեջքիս ալ լայն գօտտէլա մը, մանիքէթներուս պիչիմն ալ պարիթ է, պաշխա մանիքէթ կուզեմ»²⁰ (– Մայրիկ, այնպես է, որ ճտքավոր կոշիկ էլ եմ ուզում, մեջքիս համար լայն ժապավեն, ձեռնոցներիս ձևն էլ հնացած է, ուրիշ ձեռնոց եմ ուզում):

¹⁷ «Մեղու», Կ. Պոլիս, 1873, թիվ 151, հուլիսի 4:

¹⁸ «Մեղու», Կ. Պոլիս, 1873, թիվ 130, ապրիլի 14:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ «Մեղու», Կ. Պոլիս, 1873, թիվ 129, ապրիլի 12:

Մայրն ամեն կերպ օժանդակում է աղջկան, մտածում են բամբակե բարձերը վաճառել՝ աղջկա ցանկությունները կատարելու համար: Ի հեճուկս մոր՝ հայրը տեղի չի տալիս՝ գիտակցելով իր սխալ դաստիարակության արդյունքը.

« – Տուտո՛ւ, աս ի՞նչ պիչիմ [ձև, կերպ] հար է: Ես չիյտեմ, հիմայ պիտի պօռամ:

– Աղջիկս, նստե՛ տե՛ դուն պօռայ, ես ալ լամ, գերե՛ ժամանակին ես թերպիյե [կրթություն, քաղաքավարություն] չեղայ քի՛ քեզի ալ թերպիյե ընէի տե՛ հիմայ նե՛ դուն պօռայիր նե՛ ես ալ լայի»²¹:

Ծաղրվում է նաև տղամարդու սեթևեթ տեսակը՝ ի դեմս «թացիկ Մարգարի», որի ամենօրյա հոգսը իր մարմինն է, արտաքին տեսքը.

«Երեսիս վրայ պզտիկ լեքե՛ մը ըլլայ նե՛ հանըմներս վրաս կը խնտան ետքը»²²:

Հետաքրքիր է «Չալըրճիներու սովը» գործը, որն ավելի շատ էսսե է հիշեցնում: «Չալըրճի»-ն թուրքերեն երաժիշտ է նշանակում: Չալըրճիների սովի մասին հեղինակը միայն մեկ նախադասություն է ասում, այն էլ՝ գրվածքի վերջում. «Չալըրճիներու սովին պատճառը փնտռած ատեննիս տե՛ս ընթերցող ուր գացինք»²³: Երաժիշտներն անհետացել են, անհնար է գտնել նրանց: Հետո պարզվում է, որ թաղականի հորդորով գնացել են ի պաշտպանություն Ամբրոսիոս վարդապետի ստորագրելու: Հայտնի է, որ դեռևս «Ասիա» թերթի էջերում Պարոնյանը քանիցս հանդես է եկել Ամբրոսիոս վարդապետ Իսկենդերյանի քննադատությամբ (ևս մեկ ապացույց, որ «Մենք» ծածկանունով հրապարակված «Չալըրճիներու սովը» գործը Պարոնյանինն է): Ովքե՛ր են «չալըրճիները», եթե ոչ հասունացող «մեծապատիվ մուրացկանները»:

Ուշադրության արժանի են նաև «Մուրհանդակ Մեղուի» շարքում ներկայացված պատմությունները, ակնարկները, կարճ հարց ու պատասխանները՝ փիլիսոփայական եզրահանգումներով: Այս գործերում ևս զանազան շերտեր են բացվում՝ սոցիալական, հասարակական, մանր կենցաղային, քաղաքական և այլն: Հետևենք մի քանի կարճ հարց ու պատասխանի.

« – Ի՞նչ է յեղափոխութիւնը:

– Լրագրապետաց աչուրնուն լոյսը:

– Ազգային գործերը ի՞նչպէս կերթանկոր:

– Այնպէս որ չերթաննե՛՝ աւելի աղէկ կըլլայ:

– Ի՞նչ է ոճը:

– Թափանցիկ ապակի մը՝ որուն ետև գրագէտը որչափ ալ պահուրտի՝ դարձեալ չկրնար հմուտ աչքերէ աներևոյթ մնալ»²⁴:

²¹ Նույն տեղում:

²² «Մեղու», Կ. Պոլիս, 1873, թիվ 148, հունիսի 20:

²³ «Մեղու», Կ. Պոլիս, 1873, թիվ 130, ապրիլի 14:

²⁴ «Մեղու», Կ. Պոլիս, 1873, թիվ 177, հոկտեմբերի 6:

Ահա այդպիսի մի ապակուց այն կողմ ճանաչում ենք Պարոնյանի ոճը, չենք շփոթում նրա ձեռագիրը: **Ես, Դուն, Անիկայ, Մենք, Ով է Նե** դերանուն-ծածկանուններով ստորագրողը հանճարեղ երգիծաբանն է, որ հարց ու պատասխանով անգամ բացահայտում է իր ով լինելը.

« – Մեղո՛ւ, սա «ՈՎ է Նե»ն ո՞վ է նե՝ ինձի չ՛ըսե ս:

– Ինչո՞ւդ պէտք»²⁵:

Այս շարքում ներկայացված ստեղծագործությունների մեջ կան թե՛ երկտող սրամիտ հումորային հարց ու պատասխաններ, թե՛ երգիծական պատմվածքներ («Ծովաբաղնեբուծություն», «Պէրէքէթլի տուն մը»), թե՛ հրապարակախոսական ակնարկներ («Լրագրական կերակուր», «Աշխարհիս վերջը երբ պիտի գայ», «Լրագիր կարդացողները»): Այս բոլոր գործերը Պարոնյանը ստորագրել է «Ով է Նե» ծածկանունով: «Պէրէքէթլի տուն մը» երգիծական պատմվածքի հերոս բժիշկը քաղաքավարության հերթական գոհն ասես լինի, որին շրջապատող մարդիկ այնքան են հոգնեցնում իրենց հարցերով, որ նա զղջում է բժիշկ լինելու համար: «Լրագիր կարդացողները» կարճ ակնարկում Պարոնյանը մի քանի տողով, հրապարակախոսական ազդու, միայն իրեն բնորոշ խոսքով պատկերացում է տալիս այն օրերի, այսպես ասած, լրագրային իրականության մասին: Այսպես՝ «Յայտնի է որ հասարակութեան մեջ ամենամեծ մաս մը կայ (Աստուած բոլորովին անհետ ընէ), որ բնաւ լրագիր չը կարդար: Անկից քիչ մը պըզտիկ մաս մ՛ալ կայ (Աստուած քիչցընէ) որ *օթլագճը* [ձրիակեր] կ՛անուանի, և որ ստակ չը տալով, ինչ լրագիր որ ձեռքն իյնայ՝ կը կարդայ: Իսկ, երրորդ և ամենափոքր մաս մ՛ալ կայ (Աստուած օր օրի շատցընելով շատցընէ), որ ստակ տալով լրագիր կը կարդայ»²⁶:

Երկար կարելի է բնութագրել Պարոնյանի՝ վերը նշված դերանուն-ծածկանուններով հրապարակած գործերը, քանզի պարոնյանական նյութը ստիպում է անվերջ որոնել, խորհել, մեկնաբանել: Տեղին են Հրանտ Ասատուրի խոսքերը Պարոնյանի՝ «Մեղուի» խմբագրության տարիների վերաբերյալ. «Եռանդով գործի կ՛սկսի և կը հրատարկէ գայն մինչեւ 1874ի սկիզբը: Այս տասնըչորս ամիսներու *Մեղուի* թիւերուն մեջ մարդ կը տեսնէ այդ ատենուան մեր եկեղեցականներու կեանքին, Ազգային վարչութեան, լրագրութեան, գրականութեան, թատրոնին, ընտանեկան կենցաղին համայնապատկերը: Պարոնեան կ՛ընդգրկէ ամեն ինչդիր, և փեթակէն թռչող մեղուները կ՛երթան խայթել անխտիր ջոջն ու բարեկեցիկը, եկեղեցականն ու թաղականը, դերասանն ու խմբագիրը: Երբ մոլութեան մը դէմ կը խօսի, երբ թերութիւն մը մատնանիշ կ՛ընէ, խստափոյթ բան մը ունի, անգութ աններող: Կը հարուածէ միշտ ինչ որ իրեն վնասակար կ՛երեւայ. չարը, տգէղը, տգէտը, ծաղրե-

²⁵ «Մեղու», Կ. Պոլիս, 1873, թիվ 164, օգոստոսի 18:

²⁶ «Մեղու», Կ. Պոլիս, 1873, թիվ 160, օգոստոսի 4:

լին: Իր հեզնությունը ուժգին է»²⁷:

Ընդհանրացնելով ասվածը՝ կարելի է մի քանի դիտարկումներ անել.

1. քննարկված ստեղծագործություններն ասես դեռևս լիարժեք չհասունացած, նախատիպային գործեր լինեն, որոնք նպաստել են նրա մեծածավալ գործերի հղացմանը,

2. տարբեր թեմաներով գրված այս երկերում երգիծաբան-Պարոնյանը նկատելիորեն իր տեղը զիջում է հրապարակախոս-Պարոնյանին,

3. երգիծանքին զուգահեռ՝ առկա են խոր ողբերգական շերտեր, որոնք (դա բնորոշ է նաև նրա՝ մեզ արդեն հայտնի գործերին) առաջ են գալիս անձերի, իրերի և երևույթների արտաքին և ներքին հակասություններից, անհամապատասխանությունից,

4. առկա են ժանրային հետաքրքիր կառույցներ, որոնց ուսումնասիրությունը կարևոր ենք համարում հեղինակի ստեղծագործական կայացման փուլերն ուսումնասիրելու առումով,

5. բոլոր այս գործերում Պարոնյանը հավատարիմ է իր կոչմանը՝ երգիծանքով՝ թեկուզ հաճախ ցավեցնող, արմատախիլ անել վատը, արատավորը:

Գրականագետ Ա. Ալեքսանյանը գրում է. «Պարոնյանը ոչ թե մերժող, վիպապաշտի հեղափոխական անվերապահությամբ, այլ ճանաչող հայացքով էր իմաստավորում բարոյականության գործառույթը: Գործող բարոյական նորմերի դերն առավել սթափ գնահատելով հանդերձ, Պարոնյանի հայացքները զուգահեռաբար միասնացնում էին բարձրագույն, առավել մաքուր և կատարյալ կեցության ապագայապաշտ մի իդեալ, որին հասնելու պատկերացումը և հույսը ապավինում էին մարդու «բարոյական գիտակցության» ներուժ, ինքնաստեղծ հնարավորություններին: Պարոնյանի իրոնիայի ողբերգական ենթատեքստի պատճառը նրա մտածելակերպի և առկա բարոյականության միջև եղած անտագոնիզմն էր: Նրա նպատակը քննական մտածողության հնարավորություններով մարդուն հասցնելն էր ճշմարիտ բարու համընդհանուր գաղափարին»²⁸:

Այսպիսին է Պարոնյանը՝ երգիծանքով, ծիծաղով բարոյական գիտակցություն ձևավորող մեծ գրողը: Մարդու հանդեպ մեծ սերն է, որ ստիպում է նրան քննադատել, ծաղրել անընդունելին՝ փորձելով իր չափով աշխարհն ավելի լավը դարձնել:

Բանալի բառեր – *Հակոբ Պարոնյան, «Մեղու» երգիծաթերթ, երգիծանք, ակնարկ, դերանուն - ծածկանուններ, Ես, Դուն, Անիկայ, Մենք, Ոմն, Ո՛վ է Նէ, հայատառ թուրքերեն*

²⁷ **Հրանտ Սաստուր,** Դիմաստուերներ, Կ. Պոլիս, Հրատարակություն եւ տպագրություն Կ. Քեշիշեան որդի, 1921, էջ 175:

²⁸ **Ա. Ալեքսանյան,** Հակոբ Պարոնյանի կենսաիմաստասիրությունը, Եր., 2013, էջ 132-133:

МАРО ГУКАСЯН – Произведения Акопа Пароняна, опубликованные под псевдонимами в газете «Мегу». – В статье рассматриваются произведения классика армянской литературы А. Пароняна, напечатанные под псевдонимами в константинопольской сатирической газете “Мегу” («Пчела»), причём в качестве псевдонимов фигурируют местоимения *Ес (Я), Дун (Ты), Аника (Он), Менк (Мы), Воми (Некто)* До сих пор ни один из этих разножанровых текстов писателю не атрибутировался. Лишь отдельные исследователи утверждали, что принадлежат они Пароняну. В статье путём анализа произведений поддерживается указанная точка зрения. Следует отметить, что в «Мегу» Паронян предстаёт перед нами скорее публицистом, чем сатириком.

Ключевые слова: *Акоп Паронян, «Мегу», сатира, очерк, местоимения-псевдонимы*

MARO GHUKASYAN – Works by Hakob Paronyan Published with Pronoun-Pseudonyms in the Satirical Newspaper “Meghu” of Constantinople. – The purpose of this article is to reveal the unknown works by Armenian satiric writer Hakob Paronyan, which were signed with pronoun-pseudonyms and published in satirical newspaper “Meghu” of Constantinople. All these works haven’t been addressed to Paronyan so far. Only some literary critics have written, that the author of these pronoun-pseudonyms is Paronyan. From our point of view, all these works are written by Paronyan as there are many facts which prove it. So this article aims to do an overall analysis of these works. It is worth mentioning that in these works Paronyan is rather an orator than a satiric, although there are remarkable works in different genres.

Key words: *Hakob Paronyan, satirical newspaper “Meghu”, satire, sketch story, pronoun-pseudonyms, Yes (I), Dun (You), Anika (He), Menq (We), Vomn (Someone), Ov e Ne (Who is She), Turkish in Armenian script*

Ներկայացվել է՝ 20.01.2020

Գրախոսվել է՝ 27.03.2020

Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020